



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի Մ Ա Ր Ձ Պ Ե Տ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<29> հուլիսի 2011թ.

N 262 - Ա

ք. Արմավիր

ՍԻՄՅՈՆ ԱՎԶԻԵՎԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի վեցերորդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 929-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պաշտոնակատարի 2011 թվականի հուլիսի 29-ի զեկուցագիրը.

ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Ուսումնական հաստատության կառավարման իրավունքի հավաստագիր չստանալու պատճառով լուծել «Ջրաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Սիմյոն Ավչիևի հետ 2005 թվականի օգոստոսի 1-ին կնքված N 20 աշխատանքային պայմանագիրը:
2. «Ջրաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել Սիմյոն Ավչիևին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2011 թվականի օգոստոսի 2-ից:

ՄԱՐԶՊԵՏ՝



Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ